

ցաւ եպիսկոպոսարանի, վասն զի 1109 ին Սկիւթուպոլսոյ եպիսկոպոսական աթոռը փոխադրուեցաւ Նազարէթ: Միւննոյն ժամանակ տեղացի քրիստոնեաները շինեցին Ս. Գաբրիէլ եկեղեցին Ս. Կուսի աղբիւրին մօտ:

1187 ին Նազարէթ Սալաէտտինի տիրապետութեան տակ ինկաւ. արեւմտեան կղերականները մեկնեցան քաղաքէն և միայն տեղացի քրիստոնեաները կը մնային հոն սրբավայրերու պաշտպանութեան համար: 1263 ին Պիպարս Եգիպտոսէն գալով՝ ահարկու բանակով մը հաստատուեցաւ Թաբոր լեռան վրայ և անկէ Նազարէթ զրկեց զինուորներ քար ու քանդ ընելու սրբավայրերը և խոշտանգելու քրիստոնեաները:

1291 ին Սաչակիրները վերջնականապէս մեկնեցան Ս. Երկրէն: 1349 էն սկսեալ տեղւոյն սրբավայրերը վերստին նորոգուեցան և պաշտպանուեցան տեղացի քրիստոնեաներէն: Յիշենք մասնաւոր աւանդական պարագաները (Bar. gd. էջ 365—369):

Յիսուսի մանկութիւնը ըստ սնվաւեր Աւեստրանի մը. — Իսրայելացի Թովմասի անվաւեր Աւետարանին համաձայն, Տիրոջը մանկութեան մասին գրուած է հետեւեալը. «Ս. Տիրամայրը Նազարէթի աղբիւրին մէջ կը լուար մեր Տիրոջ հանգերձիկները: Ս. Կոյսը այս աղբիւրը կը զրկէր մեր Տէրը ջուր բերելու համար. երբ Ան քիչ մը զարգացաւ իր կամքովը կ'երթար աղբիւր»:

Յիսուս տասը տարեկան էր երբ մայրը Անոր կուտար սափորը աղբիւրէն ջուր քաշելու համար. աղբիւրը կը կոչուէր «Ս. Գաբրիէլի աղբիւր», եւ այժմ կը կոչուի Այն Սիբրի Մարիամ: Այս աղբիւրը, ըստ